

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ջրադրվածություն

1.4.1.1. Ջրադրվածության ցուցանիշների գնահատումն ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների

Ձեկույցի այս հատվածում ներկայացված են աշխատանքի շուկայի 2019-2020թթ. I, II և III եռամսյակների հիմնական ցուցանիշները՝ գնահատված աշխատուժի հետազոտության արդյունքներով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) և (կամ) Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներին և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Ստորև ներկայացվում են հետազոտության վերաբերյալ մեթոդաբանական որոշ պարզաբանումներ:

Հետազոտության ընտրանքային հիմնական միավորները մասնավոր տնային տնտեսություններն (SS) են:

Հետազոտվող միավորը մինչև 2020թ.-ը 15-75 (ներառյալ) տարեկան անձինք էին, իսկ **2020թ.-ից՝ 15 և բարձր տարիքի անձինք**, ովքեր.

ա) սովորաբար բնակվում են տվյալ SS-ում.

բ) ժամանակավորապես (մինչև 12 ամիս) չեն բնակվում տվյալ SS-ում՝ գտնվելով ՀՀ մեկ այլ բնակավայրում կամ երկրից դուրս.

գ) գտնվում են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

2019-2020թթ. տվյալների համադրելիության ապահովման նպատակով ստորև ներկայացվող տվյալները վերաբերում են 15-75 տարեկաններին:

Դիտարկվող ժամանակաշրջանը տարվա բոլոր ամիսներն են:

Հետազոտվող ժամանակահատվածը հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին օրացուցային **շաբաթն** է՝ երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ):

Ընտրանքային համակցության ամսական չափը կազմում է 649 SS, եռամսյակայինը՝ 1 947 SS, իսկ տարեկանը՝ 7 788 SS՝ ընդգրկելով ք. Երևանը և հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերը:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն յուրաքանչյուր հարցվող ըստ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի դասակարգվում է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված կամ գործազուրկ կամ աշխատուժից դուրս բնակչություն:**

Ստորև ներկայացվող ցուցանիշների մեթոդաբանական հիմքը Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թեթոզագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի¹ առանցքային դրույթներն են, որոնց վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումներ ներկայացված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական զեկույցի եռամսյակային թողարկումների սույն՝ 1.4.1.1 ենթահատվածում (օրինակ՝ տե՛ս <https://www.armstat.am/am/?nid=82&id=2257>), իսկ ավելի մանրամասն՝ «Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019» ժողովածուի (<https://www.armstat.am/am/?nid=82&id=2226>) համապատասխան բաժիններում:

Հարկ է նկատի ունենալ, որ.

ա) 2019թ. հետազոտության ընտրանքային կշիռները դեռևս ճշգրտված չեն (կալիբրացված չեն) ըստ ՀՀ մշտական բնակչության ընթացիկ հաշվառման տվյալների:

բ) ստորև ներկայացվող 2019թ. ցուցանիշները նախորդ հրապարակումներից տարբերվում են նրանով, որ վերաբերում են հետազոտության արդյունքներով գնահատված ՀՀ մշտական (ռեզիդենտ) բնակչությանը, ովքեր հետազոտության պահին.

- զբաղված են եղել ՀՀ-ում գտնվող ռեզիդենտ տնտեսական միավորում, կամ ՀՀ-ից դուրս՝ ոչ ռեզիդենտ տնտեսական միավորում (ազգային զբաղվածության ցուցանիշ),

- գործազուրկ են եղել՝ աշխատանք չեն ունեցել և աշխատանք են փնտրել ՀՀ-ում և(կամ) ՀՀ-ից դուրս (ազգային գործազրկության ցուցանիշ),

- չեն եղել զբաղված կամ գործազուրկ, այսինքն՝ դուրս են եղել աշխատուժից (ազգային ցուցանիշ):

Այսուհետ զեկույցի սույն ենթահատվածում աշխատանքի շուկայի ցուցանիշները կհրապարակվեն ՀՀ մշտական բնակչության հիմնադրույթի շրջանակում (տե՛ս վերոնշյալ բ) կետը), որի մեթոդաբանական հիմքը 19-րդ ԱՎՄՀ առանցքային դրույթներն են:

¹ Բնօրինակը՝ Resolution concerning statistics of work, employment and labour underutilization, Adopted by the Nineteenth International Conference of Labour Statisticians (October 2013) http://www.ilo.org/global/statistics-and-databases/meetings-and-events/international-conference-of-labour-statisticians/19/WCMS_230304/lang--en/index.htm

Բնօրինակի պաշտոնական թարգմանությունը՝ Резолюция I 19 Международной конференции статистиков труда (на русском языке), ссылка на сайт Международной организации труда (МОТ), http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/normativeinstrument/wcms_235603.pdf

Հարկ է նկատի ունենալ, որ.

2020թ. մարտ-ապրիլից ի վեր՝ COVID-19 համավարակով պայմանավորված, փոփոխության է ենթարկվել հետազոտության դաշտային աշխատանքների՝ տվյալների հավաքման, գործընթացը, ինչը չի կարող չանդրադառնալ հավաքվող տվյալների և ամփոփ ցուցանիշների որակի վրա: Մասնավորապես.

ա) փոփոխվել է տվյալների հավաքման մեթոդը, որը սովորական պայմաններում իրականացվում էր հետազոտության հարցազրուցավարի կողմից ընտրանքում ընդգրկված SS-ներ անմիջական այցելությամբ և ռեսպոնդենտի հետ դեմ առ դեմ հարցազրույցի միջոցով՝ թուղթ ու գրիչի մեթոդով (Pen-and-Paper Personal (Face-to-Face) Interviews (PAPI)): Այժմ այն իրականացվում է հեռախոսագանգերի միջոցով, որի հետևանքով ռեսպոնդենտներից ստացվող պատասխանները միշտ չէ, որ ամբողջական են կամ լիարժեք: Նշանակալի են դարձել նաև հետազոտությանը մասնակցությունից հրաժարման դեպքերը:

բ) **Ընտրված SS-ներ** այցելության անհնարինության (անթույլատրելիության) և կապ հաստատելու դժվարությունների, ըստ հասցեների հասանելի հեռախոսային ամբողջական և արդիականացված տվյալների շտեմարանի բացակայության պայմաններում, մասամբ շեղվում է վիճակագրական որոշակի մեթոդով իրականացված հետազոտության ընտրանքը՝ հատկապես քաղաքային բնակավայրերում և առանձնապես՝ ք. Երևանում: Նման դեպքերում՝ որպես հետազոտվող ընտրանքային միավոր, օգտագործվում են նաև սկզբնական ընտրանքում չընդգրկված, պատահական ընտրությամբ հետազոտության մեջ ներառված SS-ների տվյալները: Վերջինս հանգեցնում է պատասխանների որոշակի ընտրողականության կողմնակալության (selectivity bias) գործոնի ազդեցության, ինչով պայմանավորված որոշ ցուցանիշներ ենթարկվում են փորձագիտական ճշգրտման՝ հիմնվելով միջազգային պրակտիկայում ընդունված գնահատման գործիքակազմի վրա՝ ժամանակային շարքերի միտումների, այլընտրանքային աղբյուրների (օրինակ՝ ՊԵԿ-ի) և այլ տեղեկատվության վերլուծություն:

Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, եռամսյակներով*
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	2019թ.			2020թ.			Փոփոխությունը		
	I	II	III	I	II	III	I	II	III
	1 000 մարդ						%, 2020թ. / 2019թ.		
Աշխատանքային ռեսուրսներ	2 107.0	2 108.4	2 086.5	2 105.2	2 161.5	2 081.4	99.9	102.5	99.8
Աշխատուժից դուրս բնակչություն	908.9	848.2	804.0	925.2	916.4	831.5	101.8	108.0	103.4
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 198.0	1 260.3	1 282.5	1 180.0	1 245.2	1 249.9	98.5	98.8	97.5
Զբաղվածներ	945.0	1 052.8	1 063.8	946.5	1 027.1	1 023.0	100.2	97.6	96.2
Գործազուրկներ	253.0	207.4	218.7	233.5	218.1	226.9	92.3	105.2	103.7

Բնակչության տնտեսական ակտիվությունը, եռամսյակներով¹
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	2019թ.			2020թ.			Փոփոխությունը		
	I	II	III	I	II	III	I	II	III
	%						+/-		
Աշխատուժի մասնակցության մակարդակ ¹	56.9	59.8	61.5	56.1	57.6	60.0	-0.8	-2.2	-1.5
Զբաղվածության մակարդակ ¹	44.9	49.9	51.0	45.0	47.5	49.2	0.1	-2.4	-1.8
Գործազրկության մակարդակ ²	21.1	16.5	17.1	19.8	17.5	18.1	-1.3	1.0	1.0
Աշխատուժից դուրս բնակչության մակարդակ ¹	43.1	40.2	38.5	43.9	42.4	40.0	0.8	2.2	1.5

* Այստեղ և հետայսու՝ աշխատանքի շուկայի ցուցանիշները վերաբերում են հետազոտությամբ գնահատված ՀՀ մշտական (ռեզիդենտ) բնակչությանը:

¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների թվաքանակի նկատմամբ (ըստ մշտական բնակչության հիմնադրույթի):

² Հաշվարկված է աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

1.4.1.1. Գործազրկության ցուցանիշներն ըստ
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի
Զբաղվածության պետական գործակալության տվյալների

Աշխատուժի առաջարկը, 2020թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, մարդ	%, 2020թ. / 2019թ.	ընդամենը, մարդ	%, 2020թ. / 2019թ.
Հունվար	85 386	104.2	62 242	96.3
Փետրվար	85 709	104.0	61 872	95.0
Մարտ	85 890	103.8	61 557	94.8
Ապրիլ	85 880	103.4	60 708	93.9
Մայիս	86 826	104.8	60 751	94.7
Հունիս	87 618	106.2	60 223	95.0
Հուլիս	88 196	106.5	60 028	95.2
Օգոստոս	88 550	106.6	60 086	97.0
Սեպտեմբեր	88 547	106.3	60 164	97.1
Հոկտեմբեր	88 356	105.9	60 668	98.0
Նոյեմբեր	88 362	104.3	61 007	98.0

Աշխատուժի առաջարկն ըստ սեռի, 2020թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ				նրանցից՝ գործազուրկներ			
	կին		տղամարդ		կին		տղամարդ	
	ընդամենը, մարդ	%, 2020թ./2019թ	ընդամենը, մարդ	%, 2020թ./2019թ.	ընդամենը, մարդ	%, 2020թ./2019թ.	ընդամենը, մարդ	%, 2020թ./2019թ
Հունվար	56 616	104.4	28 770	103.9	41 296	95.8	20 946	97.7
Փետրվար	56 740	103.9	28 969	104.1	40 872	94.2	21 000	96.8
Մարտ	56 653	103.5	29 237	104.6	40 477	93.6	21 080	97.1
Ապրիլ	56 519	103.0	29 361	104.4	39 975	92.9	20 733	95.9
Մայիս	56 886	103.7	29 940	107.0	39 960	93.5	20 791	97.1
Հունիս	57 209	104.6	30 409	109.4	39 711	94.0	20 512	97.0
Հուլիս	57 529	104.8	30 667	109.8	39 387	93.5	20 641	98.6
Օգոստոս	57 756	104.9	30 794	110.0	39 284	94.5	20 802	101.9
Սեպտեմբեր	57 757	104.5	30 790	109.7	39 099	94.1	21 065	103.3
Հոկտեմբեր	57 682	104.1	30 674	109.3	39 247	95.2	21 421	103.6
Նոյեմբեր	57 704	102.8	30 658	107.1	39 432	95.1	21 575	103.9


Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020թ. նոյեմբեր

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	%, 2020թ. / 2019թ.	ընդամենը, մարդ	%, 2020թ. / 2019թ.	%, ընդամենի նկատմամբ
Ընդամենը	88 362	104.3	61 007	98.0	100
ք. Երևան	12 495	101.7	7 256	92.1	11.9
Արագածոտն	5 046	109.6	3 130	96.7	5.1
Արարատ	8 596	108.2	5 095	96.5	8.4
Արմավիր	8 853	106.3	5 684	98.1	9.3
Գեղարքունիք	6 130	102.0	4 488	93.8	7.4
Լոռի	10 343	102.9	9 381	100.4	15.4
Կոտայք	9 252	100.9	5 870	95.7	9.6
Շիրակ	17 209	107.7	12 311	103.5	20.2
Սյունիք	3 218	95.9	2 444	88.8	4.0
Վայոց ձոր	1 331	96.8	1 055	101.8	1.7
Տավուշ	5 889	104.4	4 293	104.4	7.0

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն
ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020թ. նոյեմբեր

%, 2020թ. / 2019թ.



1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը

	Ընդամենը, մարդ		%	
	2019թ.	2020թ.	2019թ. / 2018թ.	2020թ. / 2019թ.
Հունվար	64 631	62 004	92.3	95.9
Փետրվար	64 861	62 057	93.4	95.7
Մարտ	65 029	61 715	94.6	94.9
Ապրիլ	64 801	61 133	94.4	94.3
Մայիս	64 388	60 730	93.7	94.3
Հունիս	63 764	60 487	93.1	94.9
Հուլիս	63 243	60 126	92.9	95.1
Օգոստոս	62 526	60 057	92.8	96.1
Սեպտեմբեր	61 951	60 125	92.9	97.1
Հոկտեմբեր	61 931	60 416	93.8	97.6
Նոյեմբեր	62 086	60 838	95.0	98.0

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը՝ աճողական

	Ընդամենը, մարդ		%	
	2019թ.	2020թ.	2019թ. / 2018թ.	2020թ. / 2019թ.
Հունվար	64 631	62 004	92.3	95.9
Հունվար- փետրվար	64 746	62 031	92.8	95.8
Հունվար-մարտ	64 840	61 925	93.4	95.5
Հունվար-ապրիլ	64 830	61 727	93.6	95.2
Հունվար-մայիս	64 742	61 528	93.7	95.0
Հունվար-հունիս	64 579	61 354	93.6	95.0
Հունվար-հուլիս	64 388	61 179	93.5	95.0
Հունվար-օգոստոս	64 155	61 038	93.4	95.1
Հունվար-սեպտեմբեր	63 910	60 937	93.3	95.3
Հունվար-հոկտեմբեր	63 712	60 885	93.4	95.6
Հունվար-նոյեմբեր	63 564	60 881	93.5	95.8

Խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողները, 2020թ.

	Տարեսկզբից, մարդ	Նոյեմբերի վերջի դրությամբ	
		մարդ	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	145 255	10 724	100
<i>այդ թվում՝ ստացել են խորհրդատվություն հետևյալ հարցերով.</i>			
աշխատանքի և զբաղվածության օրենսդրության	36 339	3 363	31.4
մասնագիտական կողմնորոշման	14 585	1 296	12.1
զբաղվածության ծրագրերի	39 482	2 816	26.3
աշխատանքի փոփոխման	5 988	606	5.7
այլ հարցերով	48 861	2 643	24.6

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Աշխատուժի պահանջարկը¹ և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, 2020թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի պահանջարկը		Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը ²	
	<i>մարդ</i>	% / անգամ, 2020թ. / 2019թ.	<i>մարդ</i>	% / անգամ, 2020թ. / 2019թ.
Հունվար	3 550	1.6 անգամ	24	64.9
Փետրվար	3 259	1.5 անգամ	26	83.9
Մարտ	3 537	1.4 անգամ	24	75.0
Ապրիլ	3 074	91.8	28	112.0
Մայիս	3 002	74.5	29	1.4 անգամ
Հունիս	2 667	74.4	33	1.4 անգամ
Հուլիս	2 174	57,1	41	1.9 անգամ
Օգոստոս	2 005	51.4	44	2.1 անգամ
Սեպտեմբեր	2 237	56.0	40	1.9 անգամ
Հոկտեմբեր	1 801	41.3	49	2.6 անգամ
Նոյեմբեր	1 399	32.3	63	3.2 անգամ

Աշխատուժի պահանջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020թ. նոյեմբեր

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի պահանջարկը	% 2020թ. / 2019թ.	Ընդամենի նկատմամբ, %
	ընդամենը, <i>մարդ</i>		
Ընդամենը	1 399	32.3	100
ք. Երևան	584	24.2	41.7
Արագածոտն	76	85.4	5.4
Արարատ	59	89.4	4.2
Արմավիր	19	27.1	1.4
Գեղարքունիք	45	115.4	3.2
Լոռի	97	24.3	6.9
Կոտայք	141	20.2	10.1
Շիրակ	158	69.6	11.3
Սյունիք	60	65.9	4.3
Վայոց ձոր	56	77.8	4.0
Տավուշ	104	63.4	7.4

¹ Այստեղ և հետայսու՝ վերաբերում է միայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործատուների ներկայացրած պահանջարկին:


² Աշխատանք փնտրողների թվաքանակն է մեկ թափուր աշխատատեղի հաշվով:

Աշխատուժի պահանջարկն ըստ ամիսների

ամսվա ընթացքում

	Ընդամենը, մարդ		այդ թվում՝ թափուր աշխատատեղերն ըստ բնույթի				% , ընդամենը աշխատուժի պահանջարկի նկատմամբ, 2020թ.		
			կրկնվող ¹		չկրկնվող		Ընդամենը	կրկնվող աշխատա- տեղեր	չկրկնվող աշխատա- տեղեր
	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.			
Հունվար	3 004	4 457	2 356	3 778	648	679	100	84.8	15.2
Փետրվար	3 148	4 375	2 320	3 532	828	843	100	80.7	19.3
Մարտ	3 613	4 290	2 377	3 409	1 236	881	100	79.5	20.5
Ապրիլ	4 425	3 586	2 472	3 496	1 953	90	100	97.5	2.5
Մայիս	5 039	3 505	3 769	3 042	1 270	463	100	86.8	13.2
Հունիս	5 298	3 612	4 248	3 124	1 050	488	100	86.5	13.5
Հուլիս	5 083	3 162	4 040	2 577	1 043	585	100	81.5	18,5
Օգոստոս	5 580	2 626	4 565	2 079	1 015	547	100	79.2	20.8
Սեպտեմբեր	5 660	2 783	4 507	2 020	1 153	763	100	72.6	27.4
Հոկտեմբեր	6 205	2 278	4 016	1 980	2 189	298	100	86.9	13.1
Նոյեմբեր	5 672	1 949	4 547	1 516	1 125	433	100	77.8	22.2

Աշխատուժի առաջարկը, պահանջարկը և աշխատանքով ապահովվածները, նոյեմբեր




¹ Կրկնվող համարվում է թափուր այն աշխատատեղը, (զբաղմունքը) որի վերաբերյալ գործատուն հայտ է ներկայացրել հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակահատվածում և չի համալրվել (թափուր է):

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2020թ. նոյեմբեր ամսվա ընթացքում

ՏՊՏԻ (խմբ. 2)		Չկրկնվող թափուր աշխատատեղեր				Նոր ստեղծված աշխատատեղեր
		Ընդամենը, մարդ	%, ընդամենի նկատմամբ,	բանվորական մասնագիտությամբ	%, ընդամենի նկատմամբ	
A - U	Ընդամենը, այդ թվում՝	433	100	210	100	240
A	Գյուղատնտեսություն	22	5.1	20	9.5	2
B-E	Արդյունաբերություն	126	29.1	86	41.0	231
F	Շինարարություն	16	3.7	6	2.9	1
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	57	13.2	25	11.9	2
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	2	0.5	0	0	1
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	40	9.2	20	9.5	0
J	Տեղեկատվություն և կապ	4	0.9	3	1.4	0
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	6	1.4	0	0	0
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0	0.0	0	0	0
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	12	2.8	2	1.0	0
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	2	0.5	0	0	0
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովություն	4	0.9	2	1.0	0
P	Կրթություն	22	5.1	1	0.5	2
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	24	5.5	7	3.3	1
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	11	2.5	6	2.9	0
S	Սպասարկման այլ ծառայություններ	85	19.6	32	15.2	0
U	Օտարերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն	0	0	0	0	0

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսության հատվածների



Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտական կազմի



Աշխատուժի պահանջարկն ըստ զբաղմունքի տեսակների¹, 2020թ. նոյեմբեր

ամսվա վերջի դրությամբ

Կոդը	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
1-9	Ընդամենը	1 399
1	Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների, քաղաքական և հասարակական միավորումների	20
111	Ղեկավարներ՝ օրենսդիր և գործադիր մարմինների	1
113	Ղեկավարներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների	3
114	Ղեկավարներ՝ կուսակցությունների և հասարակական միավորումներ	1
121	Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների	3
122	Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների	3
123	Ղեկավարներ՝ գործառնական և այլ ստորաբաժանումների ու ծառայությունների	3
131	Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների	6
2	Մասնագետներ՝ բարձր որակավորման	310
211	Ֆիզիկոսներ, քիմիկոսներ և մասնագետներ՝ հարակից	1
212	Մաթեմատիկոսներ, վիճակագիրներ և մասնագետներ՝ հարակից	2
213	Մասնագետներ՝ համակարգիչների	7
214	Ճարտարապետներ, ճարտարագետներ և մասնագետներ՝ հարակից	25
221	Մասնագետներ՝ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների	4
222	Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	167
223	Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	16
231	Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական դպրոցների և այլ կրթական հաստատությունների	8
232	Դասավանդողներ՝ միջնակարգ դպրոցի	40
233	Դասավանդողներ՝ նախնական դպրոցի և նախադպրոցական կրթության	8
234	Դասավանդողներ՝ հատուկ կրթության բնագավառի	2
235	Մասնագետներ՝ այլ, կրթության բնագավառի	14
241	Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի	3
242	Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի	4
243	Մասնագետներ՝ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների	9
3	Մասնագետներ՝ միջին որակավորման	135
311	Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների	5
312	Աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման	9
313	Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների	3
322	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	16
323	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	11

¹ Դասակարգման հիմքը՝ Զբաղմունքների տեսակների ՀՀ դասակարգիչ:

ամսվա վերջի դրությամբ

Կոդը	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
324	Բուժարարներ և բուժողներ՝ ոչ ավանդական բժշկության	3
332	Դասավանդողներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության	4
333	Դասավանդողներ՝ հատուկ կրթության	11
341	Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների	9
342	Գործակալներ՝ առևտրական-առևտրային ծառայությունների	37
343	Աշխատողներ՝ վարչակառավարչական	2
344	Աշխատողներ՝ պետական ծառայությունների	3
345	Աշխատակիցներ՝ ոստիկանության, և խուզարկուներ	1
346	Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի	6
347	Աշխատողներ՝ արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների	15
4	Ծառայողներ՝ գրասենյակների	86
411	Օպերատորներ՝ ստեղնային մեքենաների, և քարտուղարներ	13
412	Ծառայողներ՝ թվային տեղեկատվություն մշակող	8
414	Աշխատողներ՝ գրադարանների, փոստային և այլ ծառայությունների	10
421	Գանձապահներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	31
422	Ծառայողներ՝ զբաղված հաճախորդների իրազեկմամբ	24
5	Աշխատողներ՝ սպասարկման ոլորտի, մնակարանային կոմունալ տնտեսությունների և առևտրի կազմակերպությունների	210
511	Սպասարկողներ՝ ճամփորդությունների ընթացքում և հասարակական տրանսպորտում, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	3
512	Սպասարկողներ՝ տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հանրային սննդի կազմակերպությունների	50
513	Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	23
514	Աշխատողներ՝ այլ, անհատական ծառայություններ մատուցող	34
516	Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների	1
522	Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների	76
523	Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների	8
531	Աշխատողներ՝ քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների	5
532	Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների	4
533	Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների	4
534	Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների	2
6	Աշխատողներ՝ որակավորված՝ գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների	6
613	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների և անասնաբույծներ	1
614	Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անտառային և փայտամթերման կազմակերպությունների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	1
621	Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող	4

ամսվա վերջի դրությամբ

Կոդը	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
7	Բանվորներ՝ որակավորված՝ արդյունաբերական կազմակերպությունների, գեղարվեստական արհեստների, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման	259
712	Շինարար – տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	9
713	Բանվոր–հարդարողներ՝ շինարարական և շինվերանորոգման աշխատանքների, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	14
714	Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման ու հարդարման, մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	3
721	Կադրապարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակողներ, նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	11
722	Գործիքագործ - փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	13
723	Մեքենագետներ՝ սարքավորումների, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ	11
724	Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերի	10
726	Բանվորներ՝ օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների	1
728	Բանվորներ՝ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների	1
731	Բանվորներ՝ մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքների	2
733	Բանվորներ՝ գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝ մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստման և վերականգնման	4
734	Բանվորներ՝ գրահրատարակչական արտադրության	1
741	Բանվորներ՝ սննդի արդյունաբերության	52
742	Բանվորներ՝ փայտամշակման արդյունաբերության	14
743	Բանվորներ՝ մանածագործական արդյունաբերության	69
744	Մորթեգործներ, կաշեգործներ և կոշկակարներ	23
745	Բանվորներ՝ շինարարական նյութերի արդյունաբերության	12
751	Բանվորներ՝ տրանսպորտի բնագավառի	4
752	Բանվորներ՝ կապի բնագավառի	5
8	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենաներ, փականագործ-հավաքողներ՝ մեքենաների և կայանքների	66
814	Օպերատորներ և ապարատավարներ՝ փայտանյութի մշակման և վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների	4
815	Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների	4
816	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի կայանքների	11
821	Օպերատորներ, մեքենավարներ՝ մետաղի և հանքային հումքի վերամշակման մեքենաների և սարքավորումների	1
822	Օպերատորներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ քիմիական արտադրանքի արտադրության մեքենաների և սարքավորումների	1
824	Օպերատորներ՝ փայտամշակման սարքավորումների	2
826	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների	17

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ամսվա վերջի դրությամբ

Կոդը	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
827	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սննդամթերքի և համանման այլ մթերքների մշակման սարքավորումների	2
828	Փականագործ-հավաքողներ	1
829	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ –հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբեր չներառված	2
831	Մեքենավարներ՝ գնացքաքարշերի և բանվորներ՝ հարակից զբաղմունքների	1
832	Վարորդներ՝ ավտոմոտորանսպորտի	11
833	Օպերատորներ և մեքենավարներ՝ գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման այլ շարժական սարքավորումների	9
9	Բանվորներ՝ որակավորում չունեցող	307
911	Վաճառողներ՝ փողոցում, և համանման այլ աշխատողներ	18
912	Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող	1
913	Սպասավորներ՝ տնային, հավաքարարներ՝ բնակարանների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	28
914	Աշխատողներ՝ շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքների	8
915	Տրիչներ, բեռնակիրներ, դռնապաններ և աշխատողներ՝ հարակից այլ զբաղմունքների	10
916	Հավաքողներ՝ աղբի, և համանման այլ աշխատողներ	19
917	Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում	26
921	Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների	14
931	Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման	13
932	Բանվորներ՝ մշակման արդյունաբերության	155
933	Բանվորներ՝ տրանսպորտի և կապի ոլորտի և բեռնակիրներ	15

Աշխատանքի տեղավորվածներն ըստ սեռի, 2020թ.

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը, մարդ			% / անգամ, 2020թ. / 2019թ.			% , աշխատանք փնտրողների նկատմամբ,		
	ընդամենը	կին	տղամարդ	ընդամենը	կին	տղամարդ	ընդամենը	կին	տղամարդ
Հունվար	370	236	134	54.3	52.0	59.0	0.4	0.4	0.5
Փետրվար	1 464	1 077	387	1.9 անգամ	2.0 անգամ	1.7 անգամ	1.7	1.9	1.3
Մարտ	996	735	261	91.6	101.0	72.7	1.2	1.3	0.9
Ապրիլ	628	418	210	57.5	59.4	54.1	0.7	0.7	0.7
Մայիս	579	381	198	53.4	55.2	50.3	0.7	0.7	0.7
Հունիս	898	591	307	75.0	76.5	72.2	1.0	1.0	1.0
Հուլիս	913	607	306	95.3	94.0	98.1	1.0	1.1	1.0
Օգոստոս	904	555	349	76.0	72.5	82.3	1.0	1.0	1.1
Սեպտեմբեր	1 093	746	347	103.0	99.3	111.9	1.2	1.3	1.1
Հոկտեմբեր	905	613	292	77.2	70.9	94.8	1.0	1.1	1.0
Նոյեմբեր	550	410	140	41.4	43.9	35.4	0.6	0.7	0.5